

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Մեպտեմբեր 2022
Երևան

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 6 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Մայր կազմակերպության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Պղնձի խտանյութի վերավաճառք, հանքարդյունաբերական ոլորտում ծառայությունների մատուցում
Տնօրեն՝	Սահակ Կարապետյան

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության “Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար” բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառում:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

29 սեպտեմբեր 2022թ.
Երևան



«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Հասույթ	5	42,560,114	44,932,514
Վաճառքի ինքնարժեք	6	(41,778,552)	(44,322,461)
Համախառն շահույթ		781,562	610,053
Այլ եկամուտ	7	3,257,404	500,902
Վարչական ծախսեր	8	(687,183)	(747,776)
Իրացման ծախսեր	9	(2,696,369)	(222,074)
Այլ գործառնական ծախսեր	10	(426,193)	(302,323)
Գործառնական շահույթ		229,221	(161,218)
Ֆինանսական եկամուտ		98,718	649,026
Ֆինանսական ծախսեր		(83,700)	(59,087)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ, գուտ		70,864	-
Շահույթ մինչև հարկումը		315,103	428,721
Շահութահարկի գծով ծախս	11	(121,735)	(115,321)
Տարվա շահույթ		193,368	313,400
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		193,368	313,400

6-ից 42-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. սեպտեմբերի 29-ին:

Սահակ Կարապետյան
Գլխավոր անօրեն



Լուսյա Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	1,430,663	492,275
Տրամադրված փոխառություններ		45,583	2,348,252
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	7,510,180	416,355
Դրամական միջոցներ	14	2,302,750	1,285,961
		11,289,176	4,542,843
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	2,856,302	2,595,186
Ոչ նյութական ակտիվներ		12,365	14,799
Ներդրումային գույք	16	2,429,164	2,098,589
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		49	49
		5,297,880	4,708,623
Ընդամենը ակտիվներ		16,587,056	9,251,466
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Շահութահարկի գծով պարտավորություն		94,460	19,418
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	8,470,233	1,304,711
Պայմանագրի գծով պարտավորություններ		34,813	40,603
		8,599,506	1,364,732
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	338,148	430,700
		338,148	430,700
Ընդամենը պարտավորություններ		8,937,654	1,795,432
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		223,215	223,215
Էմիսիոն եկամուտ		1,018,215	1,018,215
Կուտակված շահույթ		6,407,972	6,214,604
Ընդամենը սեփական կապիտալ	18	7,649,402	7,456,034
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		16,587,056	9,251,466

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2021թ.	2020թ.
		հազ. դրամ	հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Իրացումից մուտքեր՝ ներառյալ ԱԱՀ		42,601,641	49,049,356
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ		(43,777,045)	(56,151,089)
Աշխատակիցներին վճարված գումարներ		(1,382,389)	(1,883,018)
Պետական բյուջեի կողմից վերադարձված ԱԱՀ-ի գումար		5,675,534	9,373,007
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի և ԱԱՀ-ի		(408,007)	(528,122)
Արտահանման լիցենզիայի վճարներ		(2,680,000)	-
Այս ստացված գումարներ		(22,052)	20,876
Գործառնական գործունեությունից դրամական հոսք՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը		7,682	(118,990)
Վճարված տոկոսներ		-	(59,073)
Վճարված շահութահարկ		(139,285)	(71,369)
Գործառնական գործունեությունից դրամական հոսք		(131,603)	(249,432)
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(402,416)	(78,315)
Ներդրումային գույքի ձեռքբերում		-	(359)
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից		2,527	10,948
Ավանդների ելքագրում բանկերից		-	5,052
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից		2,298,933	2,540,984
Ստացված տոկոսներ		51,926	255,099
Ներդրումային գործունեությունից դրամական հոսք		1,950,970	2,733,410
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների ստացում		3,080,000	-
Վարկերի և փոխառությունների մարում		(3,083,778)	(2,206,334)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսք		(3,778)	(2,206,334)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ		1,815,589	277,644
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		1,285,961	925,529
Արտարժույթի փոխարժեքի հետևանքները դրամական միջոցների և դրանց համարժեքների համար		(798,800)	82,788
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	14	2,302,750	1,285,961

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	<u>Կանոնադրական կապիտալ</u>	<u>Էմիսիոն եկամուտ</u>	<u>Կուտակված շահույթ</u>	<u>Ընդամենը</u>
	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ
Մնացորդ հունվարի 1, 2021	223,215	1,018,215	6,214,604	7,456,034
<i>Տարվա համապարփակ արդյունք</i>				
Տարվա շահույթ	-	-	193,368	193,368
Մնացորդ դեկտեմբերի 31, 2021	223,215	1,018,215	6,407,972	7,649,402
	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ
Մնացորդ հունվարի 1, 2020	223,215	1,018,215	5,901,204	7,142,634
<i>Տարվա համապարփակ արդյունք</i>				
Տարվա շահույթ	-	-	313,400	313,400
Մնացորդ դեկտեմբերի 31, 2020	223,215	1,018,215	6,214,604	7,456,034

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Բովանդակություն

1.	Ընկերության մասին	11
2.	Պատրաստման հիմքերը	12
3.	Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ	13
4.	Ֆինանսական գործիքներ՝ ռիսկերի կառավարում	16
5.	Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	20
6.	Վաճառքի ինքնարժեք	21
7.	Այլ եկամուտ	22
8.	Վարչական ծախսեր	22
9.	Իրացման ծախսեր	22
10.	Այլ գործառնական ծախսեր	23
11.	Շահութահարկի գծով ծախս	23
12.	Պաշարներ	24
13.	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	25
14.	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26
15.	Հիմնական միջոցներ	27
16.	Ներդրումային գույք	28
17.	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	29
18.	Կապիտալ	29
19.	Գործարքներ կապակցված կողմերի հետ	30
20.	Պայմանական պարտավորություններ	31
21.	Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր	32
22.	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	33
	Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ	42

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Ընկերության մասին

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 1994թ-ին որպես «Հայաստանի գունավոր մետալուրգիայի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ» և 1999թ-ին անվանափոխվել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Խանջյան փող. 19:

Ընկերությունն իրականացնում է հետևյալ գործունեությունը.

- «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ից գնված պղնձի խտանյութի վերավաճառք: Խտանյութն ամբողջությամբ վաճառվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:
- հանքերի հետախուզման և գնահատման հետ կապված հանքարդյունաբերական ծառայությունների, հանքարդյունաբերական կոմբինատների շինարարության և գործառնությունների նախագծման ծառայությունների մատուցում:
- հանքավայրերի մշակման արդեն գոյություն ունեցող տեխնոլոգիաների կատարելագործում և նոր, առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծում,
- մոլիբդենի, պղնձի և այլ գունավոր, հազվագյուտ և ազնիվ մետաղների կորզման ցուցանիշների բարձրացման և ոչ հանքային հումքի հարստացման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների մշակում.
- հանքավայրերում աշխատանքային պայմանների բարելավման և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով հանքերի և հանքահարստացուցիչ ֆաբրիկաների տարածքների փոշեզերծման միջոցառումների մշակում.
- պղնձի, ալյումինի, մագնեզիումի և այլ մետաղների մետալուրգիայի տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում և հանքաքարից, խտանյութից ու թափոններից ազնիվ, հազվագյուտ և ցրված բաղադրիչների համալիր կորզման ռացիոնալ սխեմաների մշակում:

Ընկերության հիմնական պայմանագրային կողմը («Բեյզ Մեթըլս» ՓԲԸ) իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետությունում: Թեև «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի հանքավայրը և վերամշակման գործարանը գտնվում են Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող տարածքում, արտադրության գործընթացը մեծապես կախված է գետերի ջրամատակարարումից, որոնք մասամբ մնացել են Ադրբեյջանին փոխանցված տարածքներում: Ընկերությունը պարբերաբար քայլեր է ձեռնարկում խնդիրներ առկայության պարագայում արագ արձագանքելու և այլընտրանքային լուծումներ տալու ուղղությամբ:

Արցախի Հանրապետությունում ռազմական գործողությունների սկզբից ի վեր «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն ժամանակավորապես դադարեցրել էր իր գործունեությունը և բոլոր պայմանագրերի, այդ թվում՝ Ընկերության հետ կնքված պայմանագրերի կատարումը: 2021թ. հունվարի 29-ին ընկերությունները վերսկսեցին համագործակցությունը՝ «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի հանքավայրի շահագործման վերսկսումից հետո:

Ընկերության բաժնետերերն են՝ «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ն (90.12%) և «Վալլեքս Ստոկ» ՓԲԸ-ն (9.88%): Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

Ընկերության վերջնական վերահսկող անձն է պրն. Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Ընկերության հետ առնչություն չունեցող այլ ընկերություններում:

Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 169 մարդ (2020՝ 178 աշխատող):

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Կորոնավիրուսի նոր տեսակի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումն էական ազդեցություն է թողել Հայաստանի տնտեսության վրա: Համաճարակի ազդեցությունը դեռևս շարունակվում է, ինչպես նաև խնդրի լուծման համար ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունն այս պահին մնում է անորոշ:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը նույնպես շարունակում է մնալ անկայուն՝ հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքները և ընթացիկ տարածայնությունները տարածքների սահմանազատման մասով: Վերոնշյալ քաղաքական և տնտեսական գործոնների ազդեցությունը հանգեցրին ներդրողների ընդհանուր տրամադրությունների նվազմանը և ֆինանսական շուկաներում անորոշության և խոցելիության աճին:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՄ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ արտասահմանյան գործընկերոջ հետ դեբիտորական պարտքերի և Արցախի գործընկերոջ հետ կրեդիտորական պարտքերի, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2021թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ:

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2021թ.-ից հետո, և որոնք ունեցել են նշանակալի ազդեցություն Խմբի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան էական ազդեցություն Խմբի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ տղջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս գնահատումը կատարելիս, ղեկավարությունը դիտարկել է Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործունեության շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը իր բիզնես գործունեությունից գեներացնում է կայուն եկամուտ:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում անընդհատության սկզբունքի գնահատման անհամապատասխանություն՝ պայմանավորված շարունակական գործառնական դրամական ներհոսքերի ակնկալիքով:

Ընկերության հիմնական հասույթը ձևավորվում է փոխկապակցված անձանց հետ պայմանագրերի հիման վրա՝ պղնձի խթանայության և ցեմետայնացնող պղնձի գնում և վաճառք արտասահմանյան գործընկերոջ՝ ապահովելով բավարար գործառնական դրամական հոսքեր: COVID-19-ի բռնկման ժամանակահատվածից մինչև հաշվետվության ամսաթիվ ընկած ժամանակահատվածում վերամշակվող մոլիբդենի ծավալների կտրուկ անկումներ չեն գրանցվել:

Ընկերության հիմնական պայմանագրային կողմը («Բեյզ Մեթրլս» ՓԲԸ) իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետությունում: Թեև «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ի հանքավայրը և վերամշակման գործարանը գտնվում են Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող տարածքում, արտադրության գործընթացը մեծապես կախված է գետերի ջրամատակարարումից, որոնք մասամբ մնացել են Ադրբեյջանին փոխանցված տարածքներում: Ընկերությունը պարբերաբար քայլեր է ձեռնարկում խնդիրներ առկայության պարագայում արագ արձագանքելու և այլընտրանքային լուծումներ տալու ուղղությամբ:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ղեկավարության գնահատմամբ

- գործունեության ներկայիս մակարդակը բավարար է, որպեսզի «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն կարողանա աշխատել անընդհատության հիմունքով՝ հաշվի առնելով պղնձի շուկայի վերջին զարգացումները,
- «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի հետ իրականացվող խտանյութի առք ու վաճառքի ներկայիս ծավալը բավարար է, որպեսզի Ընկերությունը վաստակի շահույթ իր գործառնությունները ֆինանսավորելու համար:

Ընկերության ղեկավարության գնահատմամբ՝ չի ակնկալվում որ վերոնշյալ գործունեությունը կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա մոտակա կանխատեսվող ժամանակահատվածում:

Ընկերությունը որոշակի գնահատումների հիման վրա ունի տեսանելի ապագայում անընդհատ գործելու ողջամիտ անկախիք: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս շարունակում է կիրառել անընդհատության սկզբունքը և հաշվետվություններում առկա չեն ճշգրտումներ, որոնք անհրաժեշտ կլինեին, եթե Ընկերությունը ունակ չլիներ շարունակել անընդհատ գործել:

Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է պատվիրատուի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ պատվիրատուին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը: Պղնձի խտանյութի վաճառքի գործարքում Ընկերության ղեկավարության գնահատմամբ Ընկերությունը հանդես է գալիս որպես պրինցիպալ, այլ ոչ թե որպես գործակալ:

Հասույթի ճանաչման մանրամասն վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տե՛ս Ծանոթագրություն 22): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը (Ծանոթագրություն 22)

Պարտքային կորստի ակնկալվող պահուստը ձևավորվում է դեբիտորական պարտքերի վճարման հավանականության Ղեկավարության գնահատման վրա:

Անհավաքելության գծով կորուստների գնահատման նպատակով, Ընկերությունը դիտարկում է անցած դեպքերի, ընթացիկ և ապագա կանխատեսումների վերաբերյալ ողջամիտ ու համադրվող ամբողջական տեղեկատվությունը, որոնք հնարավոր է ձեռքբերել առանց ավելորդ մեծ ծախսերի ու պիտանի են դեբիտորական պարտքերի անհավաքելիության գնահատման նպատակով: Անցյալ փորձառությունը ճշգրտվում է ընթացիկ տեղակատվության հիման վրա՝ որպեսզի արտացոլեն ընթացիկ առկա իրավիճակները, որոնք նախկինում առկա չէին, ինչպես նաև բացառելու անցյալի այն ազդեցությունները, որոնք այլևս առկա չեն:

Պահուստը ստեղծվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ օգտագործելով պարզեցված մոտեցումը ողջ կյանքի ընթացքում պարտքի գծով ակնկալվող վնասի հանդեպ:

Ակնկալվող պարտքային վնասները կոլեկտիվ հիմունքներով չափելու համար դեբիտորական պարտքերը խմբավորվում են՝ հիմնվելով նմանատիպ պարտքային ռիսկի և մարման ժամկետների վրա: Ակնկալվող վնասի դրույքները հիմնված են Moodys վարկանիշային աղյուսակի տվյալների վրա:

Պաշարների արժեզրկման պահուստ (Ծանոթագրություն 12)

Ընկերությունը յուրաքանչյուր տարվա վերջում գնահատում և ճանաչում է արժեզրկման հայտանիշ ունեցող պաշարների, մասնավորապես դանդաղաշարժ կամ հետագա օգտագործման համար ոչ պիտանի պաշարների գծով, արժեզրկման գումարը:

Հահուքահարկ (Ծանոթագրություն 11)

Ընկերությունը ենթակա է շահութարկով հարկման Հայաստանի Հանրապետությունում: Ձեռնարկատիրական բնականոն գործունեության պայմաններում որոշ գործարքների և հաշվարկների գծով առկա է որոշակի անորոշություն: Արդյունքում, Ընկերությունը ճանաչում է հարկային պարտավորությունները՝ ելնելով այն գնահատումներից, թե արդյոք կառաջանան լրացուցիչ հարկեր և տոկոսներ: Այդ հարկային պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ չնայած Ընկերության այն համոզմունքի, որ հարկային հաշվարկը հիմնավոր է՝ այնուամենայնիվ, ընկերությունը գտնում է, որ որոշ դրույթներ հարկային մարմինների կողմից հավանական է, որ լիովին հիմնավորված չհամարվեն: Ելնելով մի շարք գործոնների գնահատումից, այդ թվում՝ նախկին փորձից և հարկային օրենսդրության մեկնաբանություններից՝ Ընկերությունը գտնում է, որ հաշվեզրկված հարկային պարտավորությունները խելամիտ են: Վերոնշյալ գնահատումը հիմնված է ենթադրությունների և գնահատումների վրա, որոնք կարող են ներառել ապագա իրադարձությունների վերաբերյալ մի շարք դատողություններ: Տարբերությունները կարող են ազդել շահութահարկի ծախսի վրա, այն չափով, որքանով վերջնական հարկային արդյունքը տարբերվում է հաշվառված գումարից:

Իրական արժեքի չափում

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- *Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*
- *Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր*
- *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա):*

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

4. Ֆինանսական գործիքներ՝ ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ,
- Տրամադրված փոխառություններ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,

**(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով
Ֆինանսական ակտիվներ**

	<i>Ամորտիզացված արժեք</i>	
	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,302,750	1,285,961
Փոխառություններ կապակցված անձանց	45,583	2,348,252
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,024,884	87,559
	5,373,217	3,721,772
	<i>Իրական արժեքով՝ շահույթ վնասի միջոցով վերաչափվող</i>	
	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,908,964	269,025
	1,908,964	269,025

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, կապակցված կողմերին տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական պարտքերը և առևտրային կրեդիտորական պարտքերը
Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով.

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Տնօրենների խորհուրդը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերը և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանները և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և ֆինանսական կազմակերպությունների մնացորդների հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Ընկերությունը չունի իր պատվիրատուների համար գործող հատուկ պարտքային ռիսկի քաղաքականություն, սակայն Ընկերության հասույթի մոտ 98.8%-ը վերագրելի է մեկ պատվիրատուի (Շվեյցարիայից) հետ իրականացվող վաճառքի գործարքներին, իսկ մնացած 1.2%-ը բաժին է ընկնում կապակցված կողմերին, և նախկինում Ընկերությունը վնաս չի կրել դեբիտորական պարտքերի հետ կապված: Թեև դեբիտորական պարտքերի հավաքագրման վրա կարող են ազդել տնտեսական գործոնները, ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չի ենթարկվում վնաս կրելու նշանակալի ռիսկի, քանի որ անցյալ ժամանակաշրջաններում այս պատվիրատուների հետ գործարքներից Ընկերությունը վնաս չի կրել, և նրանցից ոչ մեկի դեբիտորական պարտքերի մնացորդները դուրս չեն գրվել կամ պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների համար: Պարտքային գնահատումներ իրականացվում են բոլոր պատվիրատուների համար, բացառությամբ որոշակի գումարը գերազանցող փոխառությունների համար դիմող կապակցված կողմերի:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 2,302,750 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,285,961 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Բանկային հաշիվների մնացորդները (ընթացիկ հաշիվներ) պահվում են խոշոր հայկական բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Ընկերության գնահատմամբ ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է ենթարկվածությունը անհատական պարտքային ռիսկերին և պարբերաբար վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

2021թ.-ի և 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին սահմանափակվում է վերը ներկայացված ֆինանսական ակտիվների մնացորդներով (տե՛ս (բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով):

Ձգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում՝

	31 դեկտեմբեր 2021	31 դեկտեմբեր 2020
	Դրամական միջոցներ բանկերում Հազ. դրամ	Դրամական միջոցներ բանկերում Հազ. դրամ
Առաջատար 5 հայկական բանկերում (վարկանիշ Ba3 Moody's)	2,265,362	1,265,004
Ba3 ցածր և վարկանիշ չունեցող	37,388	20,957
	2,302,750	1,285,961

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից:

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքների (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) փոփոխության պատճառով և այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Ընկերությունը ենթարկված չէ տոկոսադրույքային ռիսկի:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված են վերջինիս ֆունկցիոնալ արժույթից /ՀՀ դրամ/ տարբեր արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է ֆունկցիոնալ արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով:

Վերոնշյալ քաղաքականության շարունակական արդյունավետությունը վերահսկելու համար Ղեկավարությունը ստանում է մարման ենթակա պարտավորությունների և ակնկալվող դրամական միջոցների մնացորդների գծով ամսական կանխատեսում՝ ըստ Ընկերության հիմնական արժույթների:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է դոլարով իրականացված ձեռքբերումներից, սակայն Ընկերություն կառավարում է արտարժույթային ռիսկը հասույթը գեներացնելով և ծախսերը կատարելով միևնույն արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	2021թ. ՀՀ դրամ	2020թ. ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
1 Եվրո	542.61	641.11
1 ռուբլի	6.42	7.02

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությամբ գուտ ենթարկվածությունը Եվրոյով և ռուբլով արտարժույթային ռիսկին էական չէր:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ԱՄՆ դոլարով ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ներկայացված է ստորև`

	ԱՄՆ դոլար	
	31.12.2021թ. հազար դրամ	31.12.2020թ. հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,234,736	1,265,353
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,908,964	301,399
Տրամադրված փոխառություններ	-	2,348,252
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	4,143,700	3,915,004
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(8,055,511)	(963,150)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(8,055,511)	(963,150)
Զուտ դիրքը	(3,911,811)	2,951,854

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը (արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության գուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 391,181 հազար դրամի չափով (2020թ.՝ 295,185 հազար դրամ) :

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետներում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջկված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները.

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Ընդամենը չգեղչված		
	Մինչև 3 ամիս	պարտավորու թյուններ	Հաշվեկշ- ռային արժեք
	Հազ.դրամ	Հազ.դրամ	Հազ.դրամ
2021թ. դեկտեմբերի 31			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	8,111,389	8,111,389	8,111,389
	8,111,389	8,111,389	8,111,389

	Ընդամենը չգեղչված		
	Մինչև 3 ամիս	պարտավորու թյուններ	Հաշվեկշ- ռային արժեք
	Հազ.դրամ	Հազ.դրամ	Հազ.դրամ
2020թ. դեկտեմբերի 31			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,002,459	1,002,459	1,002,459
	1,002,459	1,002,459	1,002,459

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ բաժնետիրական կապիտալ, Էմիսիոն եկամուտ, չբաշխված շահույթ):

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ.

- կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով համապատասխան հատուցումներ, և

- կարողանա ապահովել բաժնետերերին պատշաճ հատուցումներով՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին համապատասխան:

Ընկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը ռիսկին համամասնորեն: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին և բազիսային ակտիվների ռիսկային բնութագրիչներին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել բաժնետերերին կապիտալը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:

Ինչպես ոլորտում գործող մյուս կազմակերպությունները, Ընկերությունը նույնպես վերահսկում է կապիտալի կառուցվածքը՝ հիմք ընդունելով պարտքի և ճշգրտված կապիտալի գործակիցը: Այդ գործակիցը հաշվարկվում է որպես զուտ պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցություն: Չուտ պարտքը իրենից ներկայացնում է պարտքի հանրագումար (ինչպես արտացոլված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում)՝ հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները:

5. Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ընկերությունը հասույթը հիմնականում ստանում է իր պատվիրատուներին պղնձի խտանյութի և ցեմենտայնացվող պղնձի վաճառքից և հանքարդյունաբերական ծառայությունների մատուցումից:

Հասույթի այլ աղբյուրները ներառում են վարձակալության հանձնված ներդրումային գույքից ստացվող եկամուտը:

Ստորև աղյուսակում Ընկերությունը բաժանել է հասույթը տարբեր կատեգորիաների վերջինիս բնույթը, գումարը, ժամկետը և անորոշությունը պատկերելու նպատակով.

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Հասույթ պղնձի խտանյութի վաճառքից	37,638,516	44,381,541
Հասույթ ցեմենտայնացնող պղնձի վաճառքից	4,223,971	-
Հասույթ մատուցված ծառայություններից, այդ թվում <i>Գեոդեզիական, նախագծման և գիտական</i>	653,779	515,696
<i>ծառայություններ</i>	518,853	431,866
<i>Այլ հանքարդյունաբերական ծառայություններ</i>	134,926	83,830
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	42,516,266	44,897,237
Այլ հասույթ		
Վարձակալության գծով եկամուտ	43,848	35,277
	43,848	35,277
Ընդամենը հասույթ	42,560,114	44,932,514

Ստորև բերվող աղյուսակում պատվիրատուների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Շվեյցարիա	41,862,487	44,381,541
Հայաստանի Հանրապետություն	271,423	244,507
Այլ	426,204	306,466
Ընդամենը հասույթ	42,560,114	44,932,514

	2021	2020
	հազ. դրամ	հազ. դրամ
Ակտիվի գնորդին փոխանցման պահը	41,862,487	44,381,541
Ժամանակի որևէ պահին	653,779	515,696
Ժամանակի ընթացքում	42,516,266	44,897,237
Այլ հասույթ	43,848	35,277
Ընդամենը հասույթ	42,560,114	44,932,514

6. Վաճառքի ինքնարժեք

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Պղնձի խտանյութի վաճառքի ինքնարժեք	37,242,995	43,818,894
Ցեմենտայնացնող պղնձի վաճառքից	4,008,326	-
Մատուցված ծառայությունների ինքնարժեք, այդ թվում <i>Աշխատավարձ</i>	527,231	503,567
<i>Նյութեր</i>	241,067	314,165
<i>Նյութեր</i>	48,258	17,209
<i>Մաշվածություն և ամորտիզացիա</i>	71,899	45,904
<i>Գնումներ և ծառայությունների մատուցում</i>	136,167	82,701
<i>Այլ</i>	29,840	43,588
	41,778,552	44,322,461

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

7. Այլ եկամուտ

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Պղնձի արտահանման լիցենզիայի փոխհատուցվող գումար *	2,590,475	-
Փոխկապակցված ընկերություններին մատուցված ծառայություններից եկամուտ	295,282	66,559
Այլ ծառայություններից եկամուտ	167,170	48,180
Վարձակալական վճարներից եկամուտ	61,428	66,698
Պաշարների վաճառքից գուտ եկամուտ	21,273	4,491
Իրական արժեքով շահույթ/վնասով հաշվառվող գործիքների վերաչափումից եկամուտ	-	276,563
Այլ եկամուտ	121,776	38,411
Ընդամենը	3,257,404	500,902

(*) Գումարը իրենից ներկայացնում է 2021թ. սեպտեմբերից ամսից ուժի մեջ մտած Պետական տուրքի ՀՀ օրենքի փոփոխության համաձայն պղնձի խտանյութ արտահանելու յուրաքանչյուր տոննայի համար անհրաժեշտ լիցենզիաների վճարը, որը համաձայնացվել է, որ կփոխհատուցվի նշված խտանյութի մատակարարի կողմից: (ծնթ. 9)

8. Վարչական ծախսեր

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	273,738	343,953
Մաշվածություն և ամորտիզացիա	97,299	93,442
Անվտանգության ծառայություն	144,637	153,500
Գրասենյակային և կոմունալ ծառայությունների ծախսեր	73,595	52,564
Հեռահաղորդակցության ծախսեր	44,197	43,673
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	8,412	16,128
Այլ վարչական ծախսեր	45,305	44,516
Ընդամենը	687,183	747,776

9. Իրացման ծախսեր

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Պղնձի արտահանման լիցենզիայի գծով տուրք *	2,590,475	-
Նմուշառման , կշռման, պահպանման ծախսեր	104273	215463
Այլ	1,621	6,611
Ընդամենը	2,696,369	222,074

(*) Գումարը իրենից ներկայացնում է 2021թ. սեպտեմբերից ամսից ուժի մեջ մտած Պետական տուրքի ՀՀ օրենքի փոփոխության համաձայն պղնձի խտանյութ արտահանելու յուրաքանչյուր տոննայի համար անհրաժեշտ լիցենզիաների վճարը: (ծնթ. 7)

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

10. Այլ գործառնական ծախսեր

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Պաշարների արժեզրկման ծախսեր	215,288	248
Դեբիտորական պարտքերի արժեզրկման ծախսեր	57,750	-
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	33,616	44,209
Հատուցումներ աշխատակիցներին	39,217	33,266
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	22,060	-
Այլ ծառայությունների գծով ծախսեր	18,502	-
Մաշվածություն	5,325	11,202
Փոխկապակցված ընկերություններին մատուցված ծառայությունների գծով ծախսեր	-	187,346
Այլ	34,435	26,052
	426,193	302,323

11. Շահութահարկի գծով ծախս

	2021թ.	2020թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	214,287	136,410
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային փոխահատուցում	(92,552)	(21,089)
Ընդամենը շահութահարկի գծով հարկային ծախս	121,735	115,321

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18% է (2020թ.` 20%):

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2021թ.		2020թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ հարկումից առաջ	315,103		428,721	
Շահութահարկ	56,719	18%	77,170	18%
Հարկային նպաստակով չնվազեցվող ծախսեր, գուտ	65,016	21%	38,151	9%
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախս	121,735	49%	115,321	27%

Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)

Հաշվետու տարվա հետաձգված հարկը հաշվարկվել է կիրառելով 18% դրույքը (2020թ.` 18%) :

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(486,925)	27,848	(459,077)
Պաշարներ	20,851	47,707	68,558
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,342	5,053	10,395
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	30,032	11,944	41,976
	(430,700)	92,552	(338,148)
		(Հաշվեգրված)/	
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(518,267)	31,342.00	(486,925)
Պաշարներ	20,851	-	20,851
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,342	-	5,342
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	40,285	(10,253.00)	30,032
	(451,789)	21,089	(430,700)

12. Պաշարներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Պատրաստի արտադրանք	1,128,582	-
Պահեստամասեր և գործիքներ	42,762	205,803
Մատուցված ծառայություններով օգտագործված պաշարներ	63,359	135,847
Անավարտ աշխատանք	121,279	48,291
Վառելիք	1,691	3,075
Այլ պաշարներ	72,990	99,259
	1,430,663	492,275

Պաշարների կազմում ներառված է արժեզրկման պահուստը՝ 380,876 հազար դրամի չափով (2020թ.՝ 165,588 հազար դրամ):

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Պահեստամասեր և գործիքներ	146,156	13
Մատուցված ծառայություններով օգտագործված պաշարներ	141,126	90,921
Վառելիք	1,447	505
Այլ պաշարներ	92,147	74,149
	380,876	165,588

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2021 հազ. դրամ	2020 հազ. դրամ
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող առևտրական դեբիտորական պարտքեր*	1,908,964	269,025
Այլ դեբիտորական պարտքեր	2,590,475	-
Անորոշիվացված արժեքով չափվող առևտրական դեբիտորական պարտքեր	459,356	87,559
Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստը	(24,947)	-
Անորոշիվացված արժեքով դասակարգված ֆինանսական ակտիվներ	4,933,848	356,584
Մատակարարներին տրված կանխավճարներ	118,686	49,486
Արժեզրկման պահուստ	(32,803)	-
Զուտ կանխավճար	85,883	49,486
ԱԱՀ-ի գծով փոխհատուցվող գումար	2,388,559	-
Կանխավճարված հարկեր և այլ պարտքեր	101,890	10,285
	7,510,180	416,355

(*) Պայմանականորեն գնանշված վաճառքին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվառվում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող առևտրական դեբիտորական պարտքերի կազմում: Պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ մետաղների շուկաների ֆորվարդային գների հիման վրա: 2021թ. դեկտեմբեր ամսի վաճառքների մասով գործընկերոջ հետ կնքվել է համաձայնագիր, որի համաձայն միայն այդ ամսին վերաբերող վաճառքների համար ֆիքսվել է պոնձի գին:

Ֆինանսական գործիք ճանաչված դեբիտորական պարտքերը արտահայտված են հետևյալ արժույթներով

	2021 հազ. դրամ	2020 հազ. դրամ
ՀՀ դրամ	3,024,884	55,185
ԱՄՆ դոլար	1,908,964	301,399
	4,933,848	356,584

31.12.2021թ.-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատումը հետևյալն է.

Ընթացիկ	91-365 օր		Ընդամենը	
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Վճարունակության ակնկալվող կորստի դրույք	0.16%	0.56%	54.00%	100.00%
Պարտքի համախառն մեծություն	4,280,355	662,682	2,574	13,184
Կորուստի գումար	6,660	3,713	1,390	13,184
			13,184	24,947

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	68,014	19,463
Բանկային հաշիվներ արտարժույթով	2,234,736	1,266,498
	2,302,750	1,285,961

Ընկերությունը 31 դեկտեմբեր 2021թ. դրությամբ ունի 7 միլիոն ԱՄՆ դոլարի չօգտագործված վարկային գիծ ՀՀ առևտրային բանկում, որի դիմաց գրավադրված են Ընկերության շենք և հողատարածք (տես ծանոթագրություն 15):

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

15. Հիմնական միջոցներ

	Հոդ և շենքեր հազ. դրամ	Մեքենաներ և սարքավորումներ հազ. դրամ	Տրանսպորտային միջոցներ հազ. դրամ	Տնտեսական միջոցներ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
(i) Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 01.01.2020թ.	2,399,640	339,893	52,072	96,617	2,888,222
Ավելացումներ	-	77,294	-	1,021	78,315
Դուրսգրումներ	-	(21,514)	-	(2,124)	(23,638)
Մնացորդը առ 31.12.2020թ.	2,399,640	395,673	52,072	95,514	2,942,899
Մնացորդը առ 01.01.2021թ.	2,399,640	395,673	52,072	95,514	2,942,899
Ավելացումներ	322,643	176,808	572	15,400	515,423
Դուրսգրումներ	(78,635)	(14,808)	-	(1,991)	(95,434)
Մնացորդը առ 31.12.2021թ.	2,643,648	557,673	52,644	108,923	3,362,888
 (ii) Կուտակված մաշվածություն					
Մնացորդը առ 01.01.2020թ.	106,873	80,040	13,963	12,510	213,386
Տարվա ծախս	43,654	75,588	10,615	14,871	144,728
Դուրսգրում	-	(6,740)	-	(3,661)	(10,401)
Մնացորդը առ 31.12.2020թ.	150,527	148,888	24,578	23,720	347,713
Մնացորդը առ 01.01.2021թ.	150,527	148,888	24,578	23,720	347,713
Տարվա ծախս	57,112	90,623	11,074	14,348	173,157
Դուրսգրում	(8,480)	(4,980)	-	(824)	(14,284)
Մնացորդը առ 31.12.2021թ.	199,159	234,531	35,652	37,244	506,586
 (iii) Զուտ հաշվեկշռային արժեք					
Մնացորդը առ 01.01.2020թ.	2,292,767	259,853	38,109	84,107	2,674,836
Մնացորդը առ 31.12.2020թ.	2,249,113	246,785	27,494	71,794	2,595,186
Մնացորդը առ 31.12.2021թ.	2,444,489	323,142	16,992	71,679	2,856,302

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,161,226 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,889,416 հազար դրամ) գրավադրված են գրավով ապահովված վարկային գծի դիմաց (տես Ծանոթագրություն 14):

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

16. Ներդրումային գույք

հազ. դրամ	Հոդատարածք և շենքեր
<i>Մկզբնական արժեք</i>	
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	2,223,348
Ավելացումներ	359
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,223,707
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	2,223,707
Ավելացումներ	403,926
Օտարումներ	(29,739)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	2,597,894
<i>Մաշվածություն</i>	
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	86,130
Տարվա մաշվածություն	38,988
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	125,118
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	125,118
Տարվա մաշվածություն	46,819
Օտարումներ	(3,207)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	168,730
<i>Հաշվեկշռային արժեք</i>	
Առ 1 հունվարի 2020թ.	2,137,218
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,098,589
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	2,429,164

Ներդրումային գույքը վերագնահատվել է ելակետային արժեքը որոշելու համար՝ ՖՀՄՍ-ների և սցանային գործընթացի շրջանակում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ներդրումային գույքը հիմնականում ներառում է ապագա օգտագործման չորոշված նպատակով կոմերցիոն անշարժ գույքը և երրորդ անձնաց որպես գրասենյակային տարածք վարձակալությամբ հանձնվող անշարժ գույքը:

31 դեկտեմբեր 2021թ. դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը ղեկավարության կողմից գնահատվել է 3,938,139 հազար ՀՀ դրամ, որի գնահատումը դասակարգվում է Իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ապահովություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 895,167 հազար դրամ հաշվեկշռային արժեքով գույքը (2020թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 617,095 հազար դրամ) գրավադրված է գրավով ապահովված վարկային գծի դիմաց (տես Ծանոթագրություն 14):

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2021 հազ. դրամ	2020 հազ. դրամ
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող առևտրական կրեդիտորական պարտքեր*	7,971,645	914,576
Ամորտիզացված արժեքով չափվող առևտրական կրեդիտորական պարտքեր	139,744	87,883
Ամորտիզացված արժեքով դասակարգված ֆինանսական պարտավորություններ	8,111,389	1,002,459
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների գծով	91,016	53,742
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	233,198	209,786
Վճարվելիք հարկեր և տուրքեր	34,630	38,724
Ընդամենը պարտավորություններ	8,470,233	1,304,711

(*) Պայմանականորեն գնանշված գնումներին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվառվում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող առևտրական կրեդիտորական պարտքերի կազմում: Պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ մետաղների շուկաների ֆորվարդային գների հիման վրա: 2021թ. դեկտեմբեր ամսի վաճառքների մասով գործընկերոջ հետ կնքվել է համաձայնագիր, որի համաձայն միայն այդ ամսին վերաբերող վաճառքների համար ֆիքսվել է պղնձի գին:

Ֆինանսական գործիք ճանաչված կրեդիտորական պարտքերը արտահայտված են հետևյալ արժույթներով

	2021 հազ. դրամ	2020 հազ. դրամ
ԱՄՆ դոլար	8,055,511	963150
ՀՀ դրամ	52,902	39309
Այլ	2,976	-
	8,111,389	1,002,459

18. Կապիտալ

Բաժնետիրական կապիտալ և էմիսիոն եկամուտ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 22,777 սովորական բաժնետոմսից (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,777 սովորական բաժնետոմսից): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 9,800 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,800 հազար դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

(բ) Ծահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ՖՀՄՄ-ների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ծահաբաժիններ չեն հայտարարվել (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ծահաբաժիններ չէին հայտարարվել):

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հավանական փոխկապվածություն դիտարկելիս հաշվի է առնվում կապակցվածության էությունը և ոչ միայն իրավական կողմը:

Ընկերության բաժնետերերն են՝ «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ն (90.12%) և «Վալլեքս Ստոկ» ՓԲԸ-ն (9.88%): Ընկերության վերջնական վերահսկող անձն է պրն. Վալերի Մեջլումյանը:

*2020թ. դեկտեմբերի 31-ից հետո փոքրամասնության բաժնետեր՝ «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ն վաճառեց Ընկերությունում իր 9.88% բաժնեմասը «Վալլեքս Սթոք» ՓԲԸ-ին:

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Ապրանքների և ծառայությունների վաճառք				
Փոքրամասնության բաժնետեր*	-	1,690,146	-	4,268
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,559,854	37,685	2,799,989	4,633
Ապրանքների և ծառայությունների գնում				
Փոքրամասնության բաժնետեր*	-	(43,818,894)	-	(908,087)
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(38,309,437)	(47,901)	-	(13,854)
Տրամադրված փոխառություններ				
Փոքրամասնության բաժնետեր*	-	335,632		2,348,252
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	46,792	-	43,205	-

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ ընկերության տնօրենը և փոխտնօրենները: Առանցքային ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը:

	Գործարքի գումարը	
	2021	2020
	Հազ.դրամ	Հազ.դրամ
Աշխատավարձ, պարգևատրումներ և այլ հատուցումներ, ներառյալ հարկերը	62,448	593,333

20. Պայմանական պարտավորություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունն ունի ապահովագրական ծածկույթ շենքերի և գործունեության ընդհատման գծով, սակայն Ընկերությունն ապահովագրված չէ երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու արդյունքում: Քանի դեռ Ընկերությունն համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշ դեպքերը կամ պատահարները կարող են զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2 Պայմանական պարտավորություններ և պահուստներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

20.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները սպազայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20.4 Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոններ համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար և սահմանում են լրացուցիչ հարկերի և տույժերի հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվեն շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերտային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

20.5 Գնման պարտականություններ

2021 և 2020թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի էական չկատարված պարտականություններ հիմնական միջոցների գնումների գծով:

21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

1) Ռազմական գործողություններ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով, ԵՄ-ն, ԱՄՆ-ն և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի է:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ու ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն որ ՀՀ-ն ԵԱՀԿ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակը անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Մինչև այժմ շարունակվող գործողությունները հսկայան ազդեցություն ունեն ամբողջ աշխարհի ֆինանսական և ներդրումային դաշտի վրա, մասնավորապես արտարժույթային փոխարժեքների տատանումները և ստեղծված անորոշությունը կարող է ազդեցություն ունենանալ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդեցության անկանխատեսելիությունը, Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել, վերջինիս ազդեցությունը Ընկերության հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

2) Պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության սահմանին

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ մարտական գործողություններ Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի ուղղությամբ: Սեպտեմբերի 16-ին ժամանակավոր հրադադար հայտարարելուց հետո պարբերաբար տեղի են ունենում հարձակումներ: Բանակցային գործընթացները ընթացքի մեջ են և Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունը Ընկերության հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

22. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

22.1. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը, որը հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով հազարների ճշտությամբ:

22.2 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույթաչափերով:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

22.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստի կազմում ներառված գումարը տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Վարձակալված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության ժամկետից և ակտիվի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի է, որ Ընկերությունը ձեռք կբերի ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- | | |
|------------------------------|------------|
| - շենքեր | 35 տարի, |
| - մեքենաներ և սարքավորումներ | 5-14 տարի, |
| - փոխադրամիջոցներ | 5 տարի, |
| - տնտեսական միջոցներ | 5-14 տարի: |

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

Երբ գույքի օգտագործումը սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքից փոխվում է ներդրումային գույքի, կատարվում է նաև գույքի համապատասխան վերադասակարգում:

22.4 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը պահվում է կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ սովորական գործունեության ընթացքում վաճառքի, արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 35 տարի: Մաշվածության հաշվարկը սկսվում է ակտիվները որպես ներդրումային գույք դասակարգելու ամսաթվից:

22.5 Պաշարներ

Պաշարները հավաքվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման գուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների արժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, ինքնարժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը: Պատրաստի արտադրանքի ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի սկզբունքով:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

22.6 Ֆինանսական գործիքներ

i) Ծանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հողավածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների դեպքում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների դեպքում, կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ նշանակալիորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվներ. շեռագա չափում, օգուտներ և կորուստներ

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները դասում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դասին: Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դասակարգված է որպես առևտրական նպատակներով պահվող, ածանցյալ գործիք է կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, և գույտ օգուտները և կորուստները, ներառյալ տոկոսային ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Արժեզրկում

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնորեն:

22.7 Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն:

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղջված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես գեղջման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Ընկերությունը՝ որպես վարձատու

Երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Ընկերությունն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Ընկերությունը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Գործառնական վարձակալության գծով ստացված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես «այլ հասույթի» մաս:

Որպես կանոն, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որն Ընկերությունը կիրառում էր համադրելի ժամանակաշրջանում, չէր տարբերվում ՖՀՄՍ 16-ով նախատեսված քաղաքականությունից:

22.8 Կանոնադրական կապիտալ և շահաբաժիններ

Ընկերության բաժնեմասերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են վճարման ենթակա. բաժնետերերին վճարվող միջանկյալ շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հայտարարվում են տնօրենների կողմից, վերջնական շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ:

22.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները:

22.10 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հնկերությունն ունի ներկա պարտավորություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Հնկերությունից կպահանջվի կատարել պարտավորությունը, և պարտավորության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտավորությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտավորությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Հնկերության կողմից պարտավորությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

22.11 Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է բիզնեսի միավորումներին, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Հնկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ գուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը և լրացուցիչ հարկերի, տույժերի և ուշացված վճարումների գծով տոկոսների գանձման հնարավորությունը: Ընկերությունը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով իր հաշվեգրումները համապատասխան են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների գնահատումը, այդ թվում՝ հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին փորձը: Այս գնահատումը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել հետագա իրադարձություններին վերաբերող մի շարք դատողություններ: Կարող է հայտնի դառնալ նոր տեղեկատվություն, որի արդյունքում Ընկերությանը կփոխի իր դատողություններն առկա հարկային պարտավորությունների համարժեքության վերաբերյալ, և հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան այն ժամանակաշրջանի հարկային ծախսերի վրա, որի ընթացքում իրականացվել է գնահատումը:

22.12 Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Կատարման պարտավորությունները և հասույթի ճանաչման ժամկետները

Ընկերության հասույթի զգալի մասը ձևավորվում է հորատման և հետախուզական ծառայությունների մատուցումից, իսկ հասույթը սովորաբար ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները:

Խմբի հասույթի փոքր բաժինը առաջանում պայթուցիկ նկույթերի վաճառքից, որի դեպքում հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների վերահսկողությունն արդեն իսկ փոխանցվել է հաճախորդին: Սա հիմնականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ ապրանքները առաքվում են հաճախորդին: Այս պահը (երբ վերահսկողությունը փոխանցվում է) որոշելու համար անհրաժեշտ է սահմանափակ դատողություն. ապրանքի ֆիզիկական առաքումը համաձայնեցված վայրում տեղի ունենալուց հետո Ընկերությունը գրկվում է փաստացի տիրապետման իրավունքից, սովորաբար ունենում է վճարում ստանալու ներկա իրավունք (որպես միանվագ վճար առաքման պահին) և չի պահպանում տվյալ ապրանքների հետ կապված նշանակալի ռիսկերը և հատուցումները:

Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթը բխում է ֆիքսված գնով պայմանագրերից, ուստի յուրաքանչյուր պայմանագրից ստացվող հասույթի չափը որոշվում է այդ հաստատուն գների հիման վրա:

Գումարի բաշխում կատարման պարտավորություններին

Պայմանագրերի մեծ մասի համար վաճառված յուրաքանչյուր ապրանքի համար կա հաստատուն միավորի գին՝ որոշակի ժամանակահատվածում արված մեծածավալ պատվերների համար նախատեսված գեղչերով: Հետևաբար, այդպիսի պայմանագրերի ներքո պատվիրված յուրաքանչյուր միավորի համար պայմանագրային գնի բաշխման ժամանակ որևէ դատողություն չի կատարվում:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ծառայությունների գծով յուրաքանչյուր պայմանագրի գծով կա միայն մեկ կատարողական պարտականություն, որին ամբողջական գումարը բաշխվում է:

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է պատվիրատուի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ պատվիրատուին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պատվիրատուների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման հիմնական պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ծառայության տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման հիմնական պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականություն ՖՀՄՍ 15-ի համաձայն
Պղնձի խտանյութի վաճառք	<p>Պատվիրատուն ստանում է հսկողություն պղնձի խտանյութի նկատմամբ, երբ խտանյութը բարձվում է գնացք Երևանում, և հասույթը ճանաչվում է այդ պահին:</p> <p>Առաքումը կատարվում է պատվիրատուից 75%-90% կանխավճար ստանալու դեպքում: Նախնական հաշիվը դուրս է գրվում խտանյութի առաքման պահին (հսկողության փոխանցում) առաքված ապրանքաքանակի 95%-ի չափով, իսկ վերջնական հաշիվը դուրս է գրվում 100%-ի չափով՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության վերջնական արդյունքները և վերջնական գները:</p> <p>Վերջնական գինը որոշվում է հիմք ընդունելով Լոնդոնի մետաղների բորսայի պղնձի գնին հավասար խտանյութի գին՝ ելնելով պայմանագրում նշված գնանշման ժամանակաշրջանից, որը առաքման ամսվան հաջորդող ամիսն է:</p> <p>Նախնական և վերջնական հաշիվները ենթակա են վճարման ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>Պայմանագիրը պարունակում է պայմանական գնորոշման պայմաններ, համաձայն որոնց գործարքի գինը հիմնվում է գնանշման ամսվա սփոթ դրույքի վրա, քանի որ դա ուշ է կատարման պարտականության կատարման ամսաթվից:</p> <p>Հասույթը ճանաչվում է Լոնդոնի մետաղների բորսայի գնահատված պղնձի ֆորվարդային գնի հիման վրա:</p> <p>Պայմանական գնորոշման պայմանը չի հաշվառվում առանձին որպես ածանցյալ գործիք, ֆինանսական ակտիվը դասվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:</p> <p>Իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ եկամտի/ծախսերի կազմում:</p>
Հանքարդյունաբերական ծառայությունների մատուցում	<p>Հաշիվները դուրս են գրվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 60 օրվա ընթացքում:</p>	<p>Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ ծառայությունները մատուցվում են պատվիրատուներին՝ հիմք ընդունելով անցած ժամանակը:</p>

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերությունը վաճառում է պղնձի խտանյութ առանց փոփոխությունների: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը գործարքում հանդես է գալիս որպես պրինցիպալ, այլ ոչ որպես գործակալ՝ հիմք ընդունելով հետևյալ գործոնները.

- Ընկերությունը կրում է հիմնական պատասխանատվություն պատվիրատուներին ապրանքների և ծառայությունների տրամադրման կամ պատվերների կատարման համար:
- Ընկերությունը ենթարկվում է պաշարների գծով ռիսկի նախքան պատվիրատուի պատվերը կամ դրանից հետո, առաքման կամ վերադարձի ընթացքում:
- Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի պատվիրատուից ստացվելիք գումարի հետ կապված:
- Վաճառքի գները կապակցված են Լոնդոնի մետաղների բորսայի գների հետ և չեն որոշվում մատակարարի կողմից:

**«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական գործիքների իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,933,848	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբ. պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Փոխառություններ կապակցված կողմերին	45,583	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	8,111,389	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտ. պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ